ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

«ԴԱՍԱՎԱՆԴԻՐ, ՀԱՅԱՍՏԱՆ» - Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2020

«Դասավանդի՛ր, Հայաստան». Կրթաթոշակ

Ստացիր կրթաթոշակ քո կրթության համար և պարգևիր հավասար կրթության հնարավորություն աշակերտներին:

«Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամը, կարևորելով կրթության հասանելիությունը ինչպես դպրոցական, այնպես էլ ԲՈՒՀ-ական մակարդակում, հայտարարում է ուսման վարձավճարը ամբողջապես փոխհատուցող կրթաթոշակ՝ բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ավարտական կուրսի այն ուսանողների համար, որոնք

- *Սովորում են բնագիտական, մաթեմատիկական կամ SS ուղղվածություն ունեցող ֆակուլտետներում (STEM)*
- *Ունեն բարձր առաջադիմություն՝ ՄՕԳ-ը բարձր է 15-ից (20 բալանոց համակարգով)*
- *Պատրաստակամ են տվյալ կրթական աստիճանը ստանալուց (բակալավրիատ/ մագիստրատուրա) անմիջապես հետո միանալ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության զարգացման երկամյա ծրագրին:*

Կրթաթոշակին դիմելու համար մինչև նոյեմբերի 10-ը անհրաժեշտ է լրացնել հետևյալ հայտադիմումը՝
https://www.tfaforms.com/4848376

Ընտրության գործընթացը.

- *Հայտադիմում՝ https://www.tfaforms.com/4848376*
- *Անհատական հարցազրույց*
- *Պայմանագրի ստորագրում*

Այնուհետ ընտրված մասնակիցները ըստ «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի ժամանակացույցի կմիանան առցանց նախապատրաստական ծրագրին, իսկ 2021 թվականի հուլիսին Ուսուցիչ-առաջնորդների ակադեմիային, որից հետո կմեկնարկի ծրագրին մանակցությունը:

WWW.TEACHFORARMENIA.COM

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ի Առաջնորդության զարգացման ծրագիրը

«Դասավանդի՛ր, Հայաստան»-ը կրթական հիմնադրամ է, որի նպատակն է Հայաստանի եւ Արցախի բոլոր երեխաներին անկախ նրանց գտնվելու վայրից ու սոցիալական պայմաններից ապահովել հավասար ու որակյալ կրթությամբ: Այդ նպատակով մենք առաջարկում ենք Առաջնորդության զարգացման ծրագիր, որի շրջանակներում մասնակիցները՝ ուսուցիչ-առաջնորդները, լրացնում են մարզային շատ դպրոցներում առկա ուսուցիչների պակասը, երեխաներին ապահովում են գերազանց կրթությամբ, ինչպես նաեւ էական փոփոխություններ ու զարգացումներ են բերում համայնքներում բազմաբնույթ ծրագրերի իրականացման միջոցով:

Մեր մասնակիցները.

- ապրում ու կապ են հաստատում համայնքի հետ,
- դասավանդում եմ դպրոցում,
- կազմակերպում են արտադասարանային խմբակներ,
- իրականացնում են համայնքի զարգացման ծրագրեր:

Մասնակցության առավելություններ

- հնարավորություն անվճար սովորելու եւ ստանալու մանկավարժի մագիստրոսի որակավարում Հայաստանի համալսարաններում: Ուսուցման վարձը վճարում է հիմնադրամը,
- հնարավորություն մասնակցելու վերապատրաստումների, դասընթացների, մասնագիտական հանդիպումների,
- համախոհների եւ ծանոթությունների մեծ ցանցի ձեռք բերում,
- ամսական դրամական աջակցություն,
- մասնագիտական աճի հնարավորություն,
- նորարար մտքերը եւ նախագծերը իրականացնելու հարթակ,
- առաջնորդության հմտությունների զարգացման հնարավորություն,
- կարիերայի զարգացման հնարավորություն: